Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/65186/02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

պայմանագրերի կատարման կասեցումը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին

02 փետրվարի 2023 թվական **քաղաք Երևան**

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Հ. Ջալալյանի (այսուհետ նաև՝ Դատարան), քննության առնելով թիվ ԵԴ/65186/02/22 քաղաքացիական գործով պատասխանող Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ Լ. Հարությունյանի միջնորդությունը՝ օրենքի ուժով առաջացած պայմանագրերի կասեցումը վերացնելու վերաբերյալ,

ՊԱՐԶԵՑ

Դատարանի վարույթում է գտնվում թիվ ԵԴ/65186/02/22 քաղաքացիական գործն ըստ հայցի <<Թեյսթի Գրուպ>> ՍՊ ընկերության ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի ենթակայության մանկապարտեզների 2023 թվականի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 17.11.2022 թվականին հայտարարված թիվ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2022 թվականի նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով կայացված <<Թեյսթի Գրուպ>> ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին:

26.01.2023 թվականին պատասխանող Երևանի քաղաքապետարանի ներկայացուցչի կողմից պայմանագրերի կատարման կասեցումը վերացնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան, որով վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը՝ հայտնել է, որ 23.12.2022 թվականին Երևանի քաղաքապետարանի և «Ֆոտոն» ՍՊ ընկերության միջև կնքվել է թիվ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/2-2 ապրանքների ձեռքբերման գնման պայմանագիրը: Նշված պայմանագրով «Ֆոտոն» ՍՊ ընկերությունը պարտավորվել է թվով 165 մանկապարտեզների մատակարարել պայմանագրի Հավելված 1.1-ում նշված սննդամթերքները: 23.12.2022 թվականին Երևանի քաղաքապետարանի և «Դաննիկ» ՍՊ ընկերության միջև կնքվել է թիվ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/2-4 ապրանքների ձեռքբերման գնման պայմանագիրը: Նշված պայմանագրով «Դաննիկ» ՍՊ ընկերությունը պարտավորվել է թվով 165 մանկապարտեզների մատակարարել պայմանագրի Հավելված 1.1-ում նշված սննդամթերքները: 23.12.2022 թվականին Երևանի քաղաքապետարանի և «Հայկազունք» ՍՊ ընկերության միջև կնքվել է թիվ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/2-5 ապրանքների ձեռքբերման գնման պայմանագիրը: Նշված պայմանագրով «Հայկազունք» ՍՊ ընկերությունը պարտավորվել է

թվով 165 մանկապարտեզների մատակարարել պայմանագրի Հավելված 1.1-ում նշված սննդամթերքները: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի պաշտոնակատարի 20.01.2023 թիվ Ն/2080-23 գրության համաձայն՝ քննարկվող պայմանագրերը կնքվել են շուրջ 153 մանկապարտեզների թվով 25.000 երեխաների կարիքների համար սննդամթերքի մատակարարման նպատակով:

Պատասխանողի ներկայացուցիչը նշել է նաև, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը նախատեսելով միջնորդության հիմքով գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում կայացնելու իրավական հնարավորությունը՝ հիմքում դրել է հանրային շահի պաշտպանությունը, որպիսին քննարկվող պարագայում հանդիսանում է թվով 25.000 մանկահասակ երեխաների՝ ժամանակին, առողջ և բավարար սնունդ ստանալու իրավունքը, որպիսին վտանգվում է գնման գործընթացի կասեցման արդյունքում:

Պատասխանողի ներկայացուցիչը նշել է, որ առկա պայմաններում մանկահասակ երեխաների սնվելու իրավունքը գերակա է հայցվոր ընկերության առևտրային շահի նկատմամբ, և որ տնտեսական գործունեություն իրականացնելու շրջանակներում մասնավոր իրավունքի պաշտպանությունը չի կարող այնպիսի բացասական հետևանք առաջացնել, որը կհանգեցնի առավել արժեքավոր շահի ոտնահարմանը կամ հանրային իրավունքի դաշտում շահառու հանդիսացող մանկահասակ երեխաների առողջության խաթարմանը: Նշված իրավահարաբերությունների համատեքստում էական դերակատարում ունի համայնքի ղեկավարի՝ օրենքից բխող պարտականությունների կատարումը, ուստի սույն միջնորդությունը բխում է ինչպես երեխաների իրավունքների պաշտպանությունից, այնպես էլ կրթության, մշակույթի և երիտասարդության ոլորտում Երևանի քաղաքապետի կողմից ստանձնած պարտականությունների կատարման ապահովումից: Խնդրել է օրենքի ուժով առաջացած պայմանագրերի կասեցումը վերացնել:

Վերոնշյալ միջնորդությունը հայցվորին ուղարկելու վերաբերյալ միջնորդությանը կից կից ներկայացված փոստային անդորրագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայցվոր <<Թեյսթի Գրուպ>> ՍՊ ընկերությունը 27.01.2023 թվականին ստացել է պայմանագրերի կատարման կասեցումը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը, սակայն որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Դատարանն, ուսումնասիրելով միջնորդությունը և կից ներկայացված փաստաթղթերը, արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության

հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն մասով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում:

Վերը նշված իրավանորմից հետևում է, որ այն դեպքում, երբ առկա է հանրային կամ պաշտպանության, ազգային անվտանգության շահ, որից ելնելով անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, ապա Դատարանը կողմի գրավոր միջնորդության հիման վրա, կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում:

ՀՀ վճռաբեկ դատարանը բազմաթիվ նախադեպային որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ դատարանները երեխայի իրավունքները շոշափող ցանկացած գործ քննելիս առաջնայնությունը պետք է տան երեխայի շահերի առավել ապահովմանը:

«Երեխայի իրավունքների մասին» 20.11.1989 թվականի կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին:

Դատարանը, հաշվի առնելով երեխայի լավագույն շահը, արձանագրում է, որ տվյալ դեպքում առկա է հանրային շահ՝ պայմանավորված Երևան քաղաքի ենթակայության ներքո գտնվող մանկապարտեզների կարիքների համար ժամանակին սնունդ մակատակարարելու անհրաժեշտությամբ, հետևաբար, ելնելով վերոնշյալ նորմի տրամաբանությունից, գտնում է, որ պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը հիմնավոր է, ուստի պետք է վերացնել 23.12.2022 թվականին կնքված թիվ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/2-4, թիվ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/2-2 և թիվ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/2-5 ապրանքի ձեռքբերման գնման պայմանագրերի կատարման օրենքի ուժով առաջացած կասեցումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ, 200-րդ, 234.11-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Պատասխանող Երևանի քաղաքապետարանի ներկայացուցչի միջնորդությունը բավարարել:

2. Վերացնել 23.12.2022 թվականին կնքված թիվ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/2-4, թիվ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/2-2 և թիվ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/2-5 ապրանքի ձեռքբերման գնման պայմանագրերի կատարման օրենքի ուժով առաջացած կասեցումը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Հ. ՋԱԼԱԼՅԱՆ